Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
փետրվարի 29-ի N 305 - Լ որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

# ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՓԱՌԱՏՈՆԵՐԻ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ծրագրով սահմանվում են մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների և մրցանակաբաշխությունների մասնակցած և մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին դրամական խրախուսում տրամադրելու ծրագրի (այսուհետ՝ «Դրամական խրախուսում» ծրագիր) իրականացման շահառուների շրջանակը, բովանդակային և ֆինանսական պայմանները:

2. «Դրամական խրախուսում» ծրագրի նպատակն է մշակույթի գործիչների համար խրախուսման համակարգերի ներդրումը, ինքնազբաղ արվեստագետների համար բարենպաստ ստեղծագործական միջավայրի ձևավորումը:

3. «Դրամական խրախուսում» ծրագրի իրականացումը նպաստավոր պայմաններ կստեղծի միջազգային ասպարեզում հայկական մշակույթի և Հայաստանի ճանաչելիության բարձրացման համար:

4. «Դրամական խրախուսում» ծրագրի իրականացման պատասխանատու մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է (այսուհետ՝ նախարարություն):

5. «Դրամական խրախուսում» ծրագրի հաստատումը հնարավորություն կտա իրագործելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրի՝ 36.3-րդ (Մշակույթի տարբեր ոլորտներում ստեղծագործական ծրագրերի աջակցություն՝ դրամաշնորհների հատկացման բաց-մրցութային համակարգի միջոցով, ինչպես նաև դեբյուտային ստեղծագործական ծրագրերի և արվեստի փորձարարական և նորարարական ձևերի խրախուսում) և

41.1-ին (Ինքնագրաղ/ անկախ ստեղծագործողների գործունեության խթանում) կետերը և Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանման, տարածման, զարգացման 2023-2027 թթ. ռազմավարության (գերակա նպատակ 2.1 (Մշակութային և ստեղծարար ոլորտներում կառավարման մոդելների արդիականացում), գործողություն 11-ը (Մշակույթի և ստեղծարար ոլորտներում պետական խրախուսման մեխանիզմների ձևավորում):

## 2. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ

6. «Դրամական խրախուսում» ծրագրի շահառուներն են Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող մշակույթի ոլորտի այն գործիչները, ովքեր որպես Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ մասնակցել են հավելվածի աղյուսակում ներառված միջազգային հեղինակավոր փառատոներին և մրցանակաբաշխություններին և արժանացել մրցանակի: Հավելվածի աղյուսակում ընդգրկված փառատոների, մրցույթների և մրցանակաբաշխությունների ցանկը պարբերաբար կթարմացվի:

7. Ոչ անհատական (խմբային) արդյունքի դեպքում «Դրամական խրախուսում» ծրագրի հավելվածի աղյուսակում նշված գումարի չափը բաշխվում է խմբի անդամների միջև հավասարաչափ, իսկ իրավաբանական անձի դեպքում հատկացվում է տվյալ իրավաբանական անձին, որի գործադիր մարմնի որոշմամբ իրականացվում է դրամական խրախուսման բաշխումը: Եթե տվյալ գործադիր մարմնի իրավասության ներքո գործում են մի քանի ստեղծագործական խմբեր, ապա դրամական խրախուսումը տրվում է այն ստեղծագործական խմբին, որն արժանացել է մրցանակի:

8. «Դրամական խրախուսում» ծրագրի թեկնածուները, համապատասխան արդյունքներ գրանցելուց հետո 12 (տասներկու) ամսվա ընթացքում, դրամական խրախուսում ստանալու նպատակով կարող են դիմել նախարարություն՝ դիմումին կից ներկայացնելով միջազգային հեղինակավոր փառատոների և մրցանակաբաշխությունների մրցանակի արժանանալու փաստը հավաստող փաստաթղթեր (դիպլոմ,

մրցանակ, հավաստագիր), ինչպես նաև դրամական խրախուսման թեկնածուի անձնական տվյալները (անձնագիր և բանկային հաշվեհամար):

9. «Դրամական խրախուսում» ծրագրի թեկնածուների հաշվառման, փաստաթղթերի հավաքագրման և «Դրամական խրախուսում» ծրագրի թեկնածուներին Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հաստատմանը ներկայացնելու հետագա առաջադրման գործընթացը կազմակերպելու նպատակով նախարարի կողմից ստեղծվում է հանձնաժողով, որը գործում է հասարակական հիմունքներով:

10. Հանձնաժողովը կազմված է 11 անդամից և ձևավորվում է նախարարության 3, արվեստի և մշակութային ժառանգության ոլորտի ստեղծագործական միությունների մեկական ներկայացուցիչներից: Հանձնաժողովը նախագահում է մշակույթի ոլորտը համակարգող նախարարի տեղակալը:

11. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է եռամսյակային պարբերականությամբ: Հանձնաժողովը քննարկում է այդ եռամսյակի ընթացքում նախարարություն դիմած «Դրամական խրախուսում» ծրագրի թեկնածուների հայտադիմումները և համապատասխան առաջարկություններ ներկայացնում նախարարին:

12. «Դրամական խրախուսում» ծրագրի իրականացումն ապահովում է նախարարությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ նախարարի հրամանով:

13. «Դրամական խրախուսում» ծրագրի թեկնածուների հաշվառման նպատակով նախարարությունն ստեղծում և վարում է էլեկտրոնային շտեմարան:

## 3. ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

14. «Դրամական խրախուսում» ծրագիրը կտարածվի 2024 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

## 4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

15. «Դրամական խրախուսում» ծրագրի իրականացման համար կպահանջվի տարեկան 85 800 հազ. դրամ գումար:

16. 2024 թվականին ծրագրի ֆինանսավորումը կիրականացվի նախարարության հատկացված միջոցների շրջանակներում՝ չառաջացնելով բյուջետային ծախսերի ավելացում: 2025 թվականին այդ ծախսերը կներառվեն նախարարության միջնաժամկետ ծախսային ծրագրում:

17. «Դրամական խրախուսում» ծրագրով նախատեսված վճարումն իրականացվում է ամսական պարբերականությամբ, մեկ տարի ժամկետով, հավելվածի աղյուսակում նշված գումարի չափով, որը չի ներառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր այլ վճարներ: Մեկից ավելի մրցանակ ունենալու դեպքում թեկնածուն վճարվում է դրանցից յուրաքանչյուրի համար:

18. Ոչ անհատական (խմբային) արդյունքի դեպքում «Դրամական խրախուսում» ծրագրի հավելվածի աղյուսակում նշված գումարի չափը բաշխվում է խմբի անդամների միջև հավասարաչափ, իսկ իրավաբանական անձի դեպքում հատկացվում է տվյալ իրավաբանական անձին, որի գործադիր մարմնի որոշմամբ իրականացվում է դրամական խրախուսման բաշխումը: Եթե տվյալ գործադիր մարմնի իրավասության ներքո գործում են մի քանի ստեղծագործական խմբեր, ապա դրամական խրախուսումը տրվում է այն ստեղծագործական խմբին, որն արժանացել է մրցանակի:

## 5. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

19. «Դրամական խրախուսում» ծրագրի շահառուների թիվը տարեկան կկազմի 11 անհատ և 2 խումբ:

20. «Դրամական խրախուսում» ծրագրի հաստատմամբ կարժևորվի մշակույթի գործիչների դերը հայ մշակույթի հանրահռչակման գործում, մշակույթի գործիչների և ինքնազբաղ արվեստագետների համար կձևավորվի բարենպաստ ստեղծագործական միջավայր, որը կնպաստի ազգային ավանդական մշակույթի պահպանմանը,

կխթանի ժամանակակից և նորարարական արվեստի ու ստեղծարար ոլորտի զարգացումը, ինչպես նաև կնպաստի արտերկրում հայ մշակույթի հանրահռչակմանն ու դիրքավորմանը:

ԱՂՅՈՒՍԱԿ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՓԱՌԱՏՈՆՆԵՐԻ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՉԱՓԵՐԸ

**1. ԱՐՎԵՍՏԻ ՈԼՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՓԱՌԱՏՈՆՆԵՐԻՆ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՉԱՓԵՐԸ**

| NN ը/կ | Փառատոնի կամ մրցանակաբաշխության անվանումը | Երկիրը | Հաճախականությունը | Մրցանակը | Դրամական խրախուսման ամսավճարի չափը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| I. **ԱՇԽԱՐՀԻ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՓԱՌԱՏՈՆՆԵՐԸ** | | | | | |
| **1. Թատերարվեստ** | | | | | |
| 1 | Էդինբուրգի Միջազգային փառատոն | Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն | ամենամյա | մասնակցություն | 660.0 |
| 2 | Ավինյոնի փառատոն | Ֆրանսիայի Հանրապետություն | ամենամյա | մասնակցություն | 660.0 |
| 3 | Վիներ Ֆեստվոխեն | Ավստրիայի Հանրապետություն | ամենամյա | մասնակցություն | 660.0 |
| 4 | Սիբիույի թատերական փառատոն | Ռումինիայի Հանրապետություն | ամենամյա | մասնակցություն | 660.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5 | ՌԻՆԻՄԱ-ի փառատոն | շրջիկ | քառամյա | մասնակցություն | 660.0 |
| 6 | Չեխովյան փառատոն | Ռուսաստանի Դաշնություն | ամենամյա | մասնակցություն | 660.0 |
| 7 | Լոնդոնի միմֆեստիֆալ | Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն | ամենամյա | մասնակցություն | 660.0 |
| 8 | Դրեզդենի մնջախաղի միջազգային փառատոն | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | ամենամյա | մասնակցություն | 550.0 |
| 9 | Բելգրադի մոնոդրամայի և մնջախաղի փառատոն | Սերբիայի Հանրապետություն | ամենամյա | մասնակցություն | 460.0 |
| 10 | Շառլվիլ Մեզիերս տիկնիկային համաշխարհային փառատոն | Ֆրանսիայի Հանրապետություն | երկամյա | գլխավոր մրցանակ «Ոսկե քիթը» | 660.0 |
| | | | | լավագույն տիկնիկային ձևավորում/բեմանկարչություն | 550.0 |
| | | | | լավագույն տիկնիկային մանիպուլյացիա | 460.0 |
| 11 | «Իմաջինա» (Immagina) միջազգային տիկնիկային փառատոն | Իտալիայի Հանրապետություն | ամենամյա | լավագույն փողոցային կատարում | 660.0 |
| | | | | լավագույն դերասան | 550.0 |
| 12 | ԷյԷյՍիԹի ուորդ ֆեստ | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | ամենամյա | լավագույն բեմադրություն | 460.0 |
| | | | | լավագույն դերասան | 380.0 |
| | | | ամենամյա | լավագույն ներկայացում | 460.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13 | Պլովդիվի միջազգային տիկնիկային փառատոն «Երեքը շատ են երկուսը քիչ» | Բուլղարիայի Հանրապետություն | | նորարարության համար | 380.0 |
| 14 | «Գոլդեն Մագնոլիա» միջազգային տիկնիկային փառատոն | Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն | ամենամյա | լավագույն տիկնիկային շոու/ներկայացում | 460.0 |
| | | | | լավագույն տիկնիկային ձևավորում/բեմանկարչություն | 380.0 |
| 15 | «ԿՈՒԿԱՐՏ» | Ռուսաստանի Դաշնություն | ամենամյա | լավագույն տիկնիկային շոու/ներկայացում | 310.0 |
| | | | | լավագույն տիկնիկային ձևավորում/բեմանկարչություն | 250.0 |
| 16 | «Յունիդրամ» միջազգային փառատոն | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | ամենամյա | Գրան պրի | 310.0 |
| | | | | լավագույն բեմադրություն | 250.0 |
| | | | | լավագույն դերասան | 200.0 |
| **2. Կերպարվեստ** | | | | | |
| 1 | Վենետիկի բիենալե | Իտալիայի Հանրապետություն | երկամյա | «Ոսկե առյուծ» մրցանակ | 660.0 |
| | | | | մասնակցության համար (տաղավարի այցելուների նվազագույն քանակը՝ 250000) | 550.0 |
| 2 | Պրահայի քվադրինալե | Չեխիայի Հանրապետություն | քառամյա | Գրան պրի «Ոսկե տրիգա» | 460.0 |
| | | | | անվանակարգային մրցանակներ | 380.0 |
| 3 | Ֆլորենցիայի բիենալե | Իտալիայի Հանրապետություն | երկամյա | Մեդիչիի «Լորենցո Հրաշակերտի» ոսկե մեդալ | 310.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | Լիվերպուլի բիենալե | Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն | երկամյա | անվանակարգային մրցանակներ | 200.0 |
| **3. Երաժշտարվեստ** | | | | | |
| *3.1. երաժշտական (այդ թվում՝ օպերային) փառատոններ* | | | | | |
| 1 | Զալցբուրգի փառատոն | Ավստրիայի Հանրապետություն | ամենամյա | մասնակցություն | 460.0 |
| *3.2. երաժշտական մրցույթներ (բազմաժանր)* | | | | | |
| 1 | Եղիսաբեթ թագուհու մրցույթ | Բելգիայի Թագավորություն | ամենամյա, յուրաքանչյուր տարի մեկ անվանակարգ | Գրան պրի | 660.0 |
| | | | | 1-ին մրցանակ | 550.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 460.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 380.0 |
| 2 | Պ. Չայկովսկու անվան միջազգային մրցույթ (դաշնամուր, ջութակ, թավջութակ, վոկալ, փողային գործիքներ) | Ռուսաստանի Դաշնություն | ամենամյա, յուրաքանչյուր տարի մեկ անվանակարգ | Գլխավոր մրցանակ | 660.0 |
| | | | | 1-ին մրցանակ | 550.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 460.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 380.0 |
| 3 | Միջազգային երաժշտական մրցույթ ԱՌԴ | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | ամենամյա, յուրաքանչյուր տարի մեկ անվանակարգ | 1-ին մրցանակ | 660.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 550.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 460.0 |
| 4 | Ռոբերտ Շումանի անվան միջազգային մրցույթ (դաշնամուր, տղամարդ-վոկալ, կանացի-վոկալ) | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | ամենամյա, յուրաքանչյուր տարի մեկ անվանակարգ | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| 5 | | | | 1-ին մրցանակ | 460.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Յոհան Սեբաստիան Բախ միջազգային մրցույթ | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | ամենամյա, յուրաքանչյուր տարի մեկ անվանակարգ | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| 6 | Թիբոր-Կրեսպինի անվան մրցույթ (դաշնամուր, ջութակ, վոկալ) | Ֆրանսիայի Հանրապետություն | ամենամյա, յուրաքանչյուր տարի մեկ անվանակարգ | 1-ին մրցանակ | 310.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 250.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 200.0 |
| 7 | Կարլ Նիլսենի անվան միջազգային մրցույթ (դաշնամուր, կլառնետ, ֆլեյտա) | Դանիայի Թագավորություն | ամենամյա, յուրաքանչյուր տարի մեկ անվանակարգ | 1-ին մրցանակ | 310.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 250.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 200.0 |
| 8 | Մ. Ռոստալի անվան միջազգային մրցույթ (ջութակ, ալտ) | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | ամենամյա, յուրաքանչյուր տարի մեկ անվանակարգ | 1-ին մրցանակ | 310.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 250.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 200.0 |
| 9 | Երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ նվագախմբային գործիքների վրա (վալթհորն, տուբա) | Ռուսաստանի Դաշնություն | ամենամյա, յուրաքանչյուր տարի մեկ անվանակարգ | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 10 | «Պրահայի գարուն» միջազգային երաժշտական մրցույթ | Չեխիայի Հանրապետություն | ամենամյա, յուրաքանչյուր տարի մեկ անվանակարգ | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| *3.3. երաժշտական մրցույթներ (դաշնամուր)* | | | | | |
| 1 | Շոպենի անվան դաշնամուրի մրցույթ | Լեհաստանի Հանրապետություն | հնգամյա | 1-ին մրցանակ | 660.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 550.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 460.0 |
| 2 | Ֆրանց Լիստի անվան դաշնամուրի միջազգային մրցույթ | Նիդերլանդների Թագավորություն | եռամյա | 1-ին մրցանակ | 660.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 550.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 460.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Վան Կլայբերն դաշնամուրային մրցույթ | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | քառամյա | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| 4 | Բեթհովենի անվան միջազգային մրցույթ | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | երկամյա | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| 5 | Հանս Գաբոր Բելվեդեր մրցույթ | Ավստրիայի Հանրապետություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 310.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 250.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 200.0 |
| 6 | Գեզա Անդայի անվան դաշնամուրի մրցույթ | Շվեյցարիայի Համադաշնություն | եռամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 7 | Բելա Բարտոկի անվան միջազգային դաշնամուրային մրցույթ | Ավստրիայի Հանրապետություն | երկամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 8 | Ֆր. Շուբերտի անվան միջազգային դաշնամուրային մրցույթ | Ավստրիայի Հանրապետություն | երկամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 9 | Մոցարտի անվան միջազգային դաշնամուրային մրցույթ | Ավստրիայի Հանրապետություն | երկամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 10 | Բեթհովենի անվան միջազգային դաշնամուրային մրցույթ | Ավստրիայի Հանրապետություն | երկամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 11 | | Կանադա | քառամյա | 1-ին մրցանակ | 200.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Մոնրեալի միջազգային դաշնամուրային մրցույթ | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 12 | Արթուր Ռուբինշտեյնի անվան դաշնակահարների միջազգային մրցույթ | Իսրայելի պետություն | եռամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 13 | Լիոնի միջազգային դաշնամուրային մրցույթ | Ֆրանսիայի Հանրապետություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 14 | Ա. Սկրյաբինի անվան միջազգային դաշնամուրային մրցույթ | Իտալիայի Հանրապետություն | երկամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 15 | Միջազգային դաշնամուրային մրցույթ /Տակամացու/ | Ճապոնիա | եռամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 16 | Էդ. Գրիգի անվան միջազգային դաշնամուրային մրցույթ | Նորվեգիայի Թագավորություն | երկամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 17 | Կարլոսի և Սոֆիայի անվան դաշնակահարների միջազգային մրցույթ | Իսպանիայի Թագավորություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 18 | Դաշնակահարների միջազգային մրցույթ /Քլիվլենդ/ | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | երկամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| *3.4. երաժշտական մրցույթներ (ջութակ)* | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Պագանինիի անվան ջութակահարների մրցույթ | Իտալիայի Հանրապետություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 660.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 550.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 460.0 |
| 2 | Սիբելիուսի անվան ջութակահարների մրցույթ | Ֆինլանդիայի Հանրապետություն | հնգամյա | 1-ին մրցանակ | 660.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 550.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 460.0 |
| 3 | Տիբոր Վարգա ջութակահարների միջազգային մրցույթ | Շվեյցարիայի Համադաշնություն | եռամյա | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| 4 | Յոզեֆ Յոահիմի անվ. ջութակահարների միջազգային մրցույթ | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | եռամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 5 | Հենրիկ Վիենավսկու անվան ջութակահարների միջազգային մրցույթ | Լեհաստանի Հանրապետություն | հնգամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 6 | Կառլ Ֆլեշի անվ. ջութակահարների միջազգային մրցույթ | Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն | երկամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 7 | Պաբլո Սարասատեի անվ. ջութակահարների միջազգային մրցույթ | Իսպանիայի Թագավորություն | երկամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 8 | | Ռումինիայի Հանրապետություն | երկամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Ջորջե Էնեսկուի անվ. միջազգային մրցույթ /դաշնամուր, ջութակ, թավջութակ, կոմպոզիցիա | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 9 | Աբրահամ Ցամպոլսկու անվ. ջութակահարների միջազգային մրցույթ | Ռուսաստանի Դաշնություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 10 | Դավիդ Օյստրախի անվ. ջութակահարների միջազգային մրցույթ | Ռուսաստանի Դաշնություն | եռամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| *3.5. երաժշտական մրցույթներ (թավջութակ)* | | | | | |
| 1 | Մստիսլավ Ռոստրոպովիչի անվան թավջութակահարների միջազգային մրցույթ | Ռուսաստանի Դաշնություն | քառամյա | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| 2 | Վիտոլդի Լուտոսլավսկու անվան թավջութակի միջազգային մրցույթ | Լեհաստանի Հանրապետություն | երկամյա | 1-ին մրցանակ | 310.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 250.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 200.0 |
| *3.6. երաժշտական մրցույթներ (կոնտրաբաս, շեփոր, կիթառ, դիրիժորություն, կոմպոզիտորական արվեստ)* | | | | | |
| 1 | Տոկիոյի միջազգային դիրիժորական մրցույթ | Ճապոնիա | եռամյա | 1-ին մրցանակ | 660.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 550.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 460.0 |
| 2 | Գուստավ Մալերի դիրիժորական մրցույթ | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | եռամյա | 1-ին մրցանակ | 660.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 550.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 460.0 |
| 3 | | | ամենամյա | 1-ին մրցանակ | 460.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Յ. Մ. Շպերգերի անվան միջազգային մրցույթ (կոնտրաբաս) | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| 4 | Գ. Բոտտեսինիի անվան միջազգային մրցույթ (կոնտրաբաս) | Իտալիայի Հանրապետություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| 5 | Ժնևի միջազգային երաժշտական կոմպոզիտորական մրցույթ | Շվեյցարիայի Համադաշնություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| 6 | Մ. Անդրեի անվան միջազգային մրցույթ (շեփոր) | Ֆրանսիայի Հանրապետություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 310.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 250.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 200.0 |
| 7 | Դասական կիթառի միջազգային մրցույթ | Ավստրիայի Հանրապետություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 310.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 250.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 200.0 |
| 8 | Բեզանսոնի երիտասարդ դիրիժորների միջազգային մրցույթ-փառատոն | Ֆրանսիայի Հանրապետություն | երկամյա | 1-ին մրցանակ | 310.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 250.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 200.0 |
| 9 | Կիթառի միջազգային մրցույթ | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | ամենամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 10 | Օպերային դիրիժորների միջազգային մրցույթ | Բելգիայի Թագավորություն | եռամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11 | Արտուրո Տոսկանինիի դիրիժորների միջազգային մրցույթ | Իտալիայի Հանրապետություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 12 | Սեն-Մորիս երգեհոնի միջազգային մրցույթ | Ֆրանսիայի Հանրապետություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| 13 | Ստարա-Զագորա շեփորի միջազգային մրցույթ | Բուլղարիայի Հանրապետություն | երկամյա | 1-ին մրցանակ | 310.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 250.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 200.0 |
| 14 | Կամերային երաժշտության Մելբուրնի միջազգային մրցույթ | Շոտլանդիայի Թագավորություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 310.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 250.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 200.0 |
| 15 | Ժնևի լարային քառյակների միջազգային մրցույթ | Շվեյցարիայի Համադաշնություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 310.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 250.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 200.0 |
| 16 | Բանֆֆի լարային քառյակների միջազգային մրցույթ | Կանադա | եռամյա | 1-ին մրցանակ | 310.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 250.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 200.0 |
| *3.7. վոկալի մրցույթներ և փառատոներ* | | | | | |
| 1 | Օպերալիա. Պլասիդո Դոմինգո Համաշխարհային օպերային երգի մրցույթ | Իտալիայի Հանրապետություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 660.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 550.0 |
| | | | | Rolex մրցանակ | 460.0 |
| 2 | Էլիանոր Մքքոլում Հյուսթոն Գրանդ օպերա միջազգային մրցույթ | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | ամենամյա | 1-ին մրցանակ | 660.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 550.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 460.0 |
| 3 | | | եռամյա | Գրան պրի | 550.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Ստանիսլավ Մոնյուշկո օպերային միջազգային մրցույթ | Լեհաստանի Հանրապետություն | | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| 4 | Ելենա Օբրազցովայի անվան միջազգային մրցույթ | Ռուսաստանի Դաշնություն | երկամյա | Գրան պրի | 550.0 |
| | | | | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| 5 | Մարիա Կալլաս Գրան պրի-Օպերա Վոկալի միջազգային մրցույթ | Հունաստանի Հանրապետություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| 6 | Օտտավիո Զինոյի օպերային միջազգային մրցույթ | Իտալիայի Հանրապետություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2 րդ մրցանակ | 380.0 |
| 7 | Բոլշայա Օպերա (Կուլտուրա ալիքի նախագիծ) | Ռուսաստանի Դաշնություն | ամենամյա | 1–ին մրցանակ | 310.0 |
| 8 | Կլաուդիա Տայն միջազգային օպերային միջազգային մրցույթ | Էստոնիայի Հանրապետություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 310.0 |
| | | | | 2 րդ մրցանակ | 250.0 |
| 9 | «Քարդիֆի ձայները» BBC-ի օպերային երգեցողության միջազգային մրցույթ | Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն | երկամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 10 | Բոգաչյովայի անվան Սանկտ Պետերբուրգի միջազգային վոկալիստների մրցույթ | Ռուսաստանի Դաշնություն | երկամյա | 1-ին մրցանակ | 200.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 130.0 |
| 11 | | | ամենամյա | 1-ին մրցանակ | 200.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Ֆիորենցա Չեղոլինգ ՍՈՒ միջազգային օպերային օնլայն մրցույթ | Իտալիայի Հանրապետություն | | 2-րդ մրցանակ | 160.0 |
| *3.8. երգչախմբային մրցույթներ* | | | | | |
| 1 | Տակառազուկա միջազգային երգչախմբային փառատոն | Ճապոնիա | ամենամյա | 1-ին մրցանակ | 660.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 550.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 460.0 |
| *2* | Մարկտոբերդոֆի միջազգային երգչախմբային մրցույթ | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 550.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 460.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 380.0 |
| *3* | Երգչախմբային մրցույթ-փառատոն | Իսպանիայի Թագավորություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| *4* | Ասիական խմբերգային Գրան Պրի | Մալայզիա | երկամյա | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| *5* | Պրովանսի միջազգային երգչախմբային փառատոն | Ֆրանսիայի Հանրապետություն | երկամյա | 1-ին մրցանակ | 380.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 310.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 250.0 |
| *6* | Համաշխարհային երգչախմբային խաղեր | Նոր Զելանդիա | ամենամյա | 1-ին մրցանակ | 380.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 310.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 250.0 |
| *3.9. երգչախմբային փառատոներ* | | | | | |
| *1* | Երգչախմբային արվեստի համաշխարհային սիմպոզիում | | ամենամյա | մասնակցություն | 380.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *2* | Բազելի երիտասարդական երգչախմբային փառատոն | Շվեյցարիայի Համադաշնություն | ամենամյա | մասնակցություն | 250.0 |
| *3* | Հոգևոր երաժշտության երգչախմբային փառատոն Մարկտոբերդոֆում | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | ամենամյա | մասնակցություն | 250.0 |
| *4* | Մոնտանայի միջազգային երգչախմբային փառատոն | ԱՄՆ | ամենամյա | մասնակցություն | 250.0 |
| *5* | Cork միջազգային երգչախմբային փառատոն | Իռլանդիա | ամենամյա | մասնակցություն | 250.0 |
| *6* | ԿանտաՌոդե միջազգային երգչախմբային փառատոն | Նիդերլանդներ | ամենամյա | մասնակցություն | 250.0 |
| **4. Կինոարվեստ** | | | | | |
| *4.1.* մրցանակաբաշխություններ | | | | | |
| 1 | Ամերիկյան կինոակադեմիաի Օսկար մրցանակաբաշխություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | ամենամյա | անվանակարգային մրցանակ | 800.0 |
| | | | | մասնակցություն | 660.0 |
| 2 | Ոսկե Գլոբուս | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | ամենամյա | անվանակարգային մրցանակ | 660.0 |
| | | | | մասնակցություն | 550.0 |
| 3 | Եվրոպական կինոակադեմիայի մրցանակ | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | ամենամյա | անվանակարգային մրցանակ | 660.0 |
| | | | | մասնակցություն | 550.0 |
| 4 | Ասիախաղաղօվկիանոսյան կինոմրցանակ | Ավստրալական Միություն | ամենամյա | անվանակարգային մրցանակ | 460.0 |
| | | | | մասնակցություն | 380.0 |
| 5 | Բրիտանական կինոակադեմիայի ԲԱՖՏԱ մրցանակ | Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային | ամենամյա | անվանակարգային մրցանակ | 200.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Իռլանդիայի Միացյալ Թագավորություն | | մասնակցություն | 160.0 |
| 6 | Ֆրանսիական կինոակադեմիայի Սեզար մրցանակաբաշխություն | Ֆրանսիայի Հանրապետություն | ամենամյա | անվանակարգային մրցանակ | 200.0 |
| | | | | մասնակցություն | 160.0 |
| *4.2. ՖԻԱՊՖ-ի (FIAPF)-ի կողմից որակավորված կինոփառատոներ[1]* | | | | | |
| 1 | *ՖԻԱՊՖ -ի (FIAPF)-ի կողմից որակավորված կինոփառատոներ* | | ամենամյա | անվանակարգային մրցանակ | 660.0 |
| | | | ամենամյա | մասնակցություն | 550.0 |
| 2 | *ՖԻԱՊՖ-ի կողմից որակավորված կինոփառատոներ ըստ ուղղվածության* | | ամենամյա | անվանակարգային մրցանակ | 460.0 |
| | | | ամենամյա | մասնակցություն | 380.0 |
| **5. Պարարվեստ** | | | | | |
| 1 | Դանս օփեն բալետի միջազգային փառատոն | Ռուսաստանի Դաշնություն | ամենամյա | Գրան պրի | 660.0 |
| | | | | անվանակարգային մրցանակ | 550.0 |
| 2 | Լոզանի միջազգային բալետային մրցույթ | Շվեյցարիայի Համադաշնություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 660.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 550.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 460.0 |
| 3 | Բալետի արտիստների միջազգային մրցույթ Վարնայում | Բուլղարիայի Հանրապետություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 660.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 550.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 460.0 |
| 4 | Բալետի միջազգային մրցույթ «Ջեքսոն» | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | ամենամյա | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| 5 | Ռուդոլֆ Նուրիևի անվան փառատոն | Ռուսաստանի Դաշնություն | ամենայմա | անվանակարգային մրցանակ | 380.0 |

[1] Ցանկը պարբերաբար թարմացվելու և հրապարակվելու է ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքէջում:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 | «Արաբեսկ» մրցույթ | Ռուսաստանի Դաշնություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| 7 | «Ոսկե պուանտ» | Ֆրանսիայի Հանրապետություն | ամենամյա | 1-ին մրցանակ | 460.0 |
| | | | | 2-րդ մրցանակ | 380.0 |
| | | | | 3-րդ մրցանակ | 310.0 |
| 8 | Պարի միջազգային մրցույթ-փառատոն «Դանսինգ Իտալի» | Իտալիայի Հանրապետություն, Պեզարո | ամենամյա | դիպլոմներ՝ տարբեր անվանակարգերի համար | 310.0 |
| II. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՓԱՌԱՏՈՆԵՐԸ | | | | | |
| **1. Թատերարվեստ** | | | | | |
| 1 | Պեկինի միջազգային տիկնիկային փառատոն | Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն | ամենամյա | «Լավագույն տիկնիկային շոու» | 460.0 |
| | | | | «Լավագույն ռեժիսուրա» | 380.0 |
| | | | | «Լավագույն տիկնիկային դիզայն» | 310.0 |
| 2 | Չունչոն տիկնիկային փառատոն | Կորեայի Հանրապետություն | ամենամյա | Գրան պրի | 460.0 |
| | | | ամենամյա | դիպլոմներ | 380.0 |
| 3 | Չեխովյան փառատոն | Ռուսաստանի Դաշնություն | ամենամյա | գլխավոր մրցանակ | 310.0 |
| | | | | լավագույն ռեժիսոր | 460.0 |
| | | | | լավագույն դերասան | 380.0 |
| 4 | Բենգալուռույի միջազգային տիկնիկային փառատոն | Հնդկաստանի Հանրապետություն | ամենամյա | «Լավագույն տիկնիկային շոու» | 310.0 |
| | | | | «Լավագույն ռեժիսուրա» | 250.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5 | Կաիիրեյի ժամանակակից թատրոնի միջազգային փառատոն | Եգիպտոսի Արաբական Հանրապետություն | ամենամյա | դիպլոմներ | 310.0 |
| 6 | Թբիլիսիի միջազգային թատերական փառատոն | Վրաստան | ամենամյա | անվանակարգային դիպլոմներ | 200.0 |
| 7 | Բևեռլիի տիկնիկային թատրոնների փառատոն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | ամենամյա | դիպլոմներ | 200.0 |
| **2. Կերպարվեստ** | | | | | |
| 1 | Լառնակայի բիենալե | Կիպրոսի Հանրապետություն | երկամյա | անվանակարգային մրցանակ | 310.0 |
| 2 | Մալթայի բիենալե | Մալթայի Հանրապետություն | երկամյա | անվանակարգային մրցանակ | 200.0 |
| **3. Կինոարվեստ** | | | | | |
| 1 | Սարաևոյի կինոփառատոն | Բոսնիա և Հերցեգովինա | ամենամյա | գլխավոր մրցանակ | 310.0 |
| | | | | անվանակարգային մրցանակ | 250.0 |
| 2 | Ռոտերդամի միջազգային կինոփառատոն | Նիդերլանդների Թագավորություն | ամենամյա | գլխավոր մրցանակ | 310.0 |
| | | | | անվանակարգային մրցանակ | 250.0 |
| 3 | Վավերագրական կինոյի միջազգային փառատոն Ամստերդամում (IDFA) | Նիդերլանդների Թագավորություն | ամենամյա | գլխավոր մրցանակ | 310.0 |
| | | | | անվանակարգային մրցանակ | 250.0 |
| 4 | Սանդենս Կինոփառատոն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | ամենամյա | գլխավոր մրցանակ | 310.0 |
| | | | | անվանակարգային մրցանակ | 250.0 |
| 5 | Անիմացիոն ֆիլմերի միջազգային փառատոն Անսիում | Ֆրանսիայի Հանրապետություն | ամենամյա | գլխավոր մրցանակ | 310.0 |
| | | | | անվանակարգային մրցանակ | 250.0 |
| 6 | | | ամենամյա | գլխավոր մրցանակ | 310.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Անիմացիոն ֆիլմերի միջազգային փառատոն Բրյուսելում | Բելգիայի Թագավորություն | | անվանակարգային մրցանակ | 250.0 |
| 7 | Անիմացիոն ֆիլմերի միջազգային փառատոն Զագրեբում | Խորվաթիայի Հանրապետություն | ամենամյա | գլխավոր մրցանակ | 310.0 |
| | | | | անվանակարգային մրցանակ | 250.0 |
| 8 | Մուլտֆիլմերի և անիմացիայի միջազգային փառատոն Չինաստանում | Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն | ամենամյա | գլխավոր մրցանակ | 200.0 |
| | | | | անվանակարգային մրցանակ | 160.0 |
| 9 | Վավերագրական կինոյի և անիմացիայի միջազգային փառատոն Լայպցիգում (DOK Leipzig) | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | ամենամյա | գլխավոր մրցանակ | 200.0 |
| | | | | անվանակարգային մրցանակ | 160.0 |
| 10 | Վիժն դյու ռիլ վավերագրական ֆիլմերի փառատոն | Շվեյցարիայի Համադաշնություն | ամենամյա | գլխավոր մրցանակ | 310.0 |
| | | | | անվանակարգային մրցանակ | 250.0 |
| 11 | Կոտբուս միջազգային փառատոն | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | ամենամյա | գլխավոր մրցանակ | 200.0 |
| | | | | անվանակարգային մրցանակ | 160.0 |
| 12 | Կոպենհագենի Սիֆիդոքս միջազգային կինոփառատոն | Դանիայի Թագավորություն | ամենամյա | գլխավոր մրցանակ | 200.0 |
| | | | | անվանակարգային մրցանակ | 160.0 |
| 13 | Հոթդոքս միջազգային կինոփառատոն | Կանադա | ամենամյա | գլխավոր մրցանակ | 250.0 |
| | | | | | 200.0 |
| 14 | Տրիբեկա ֆիլմ ֆեստիվալ | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | ամենամյա | գլխավոր մրցանակ | 310.0 |
| | | | | անվանակարգային մրցանակ | 250.0 |
| 15 | Շտուտգարդի անիմացիոն ֆիլմերի միջազգային կինոփառատոն | Գերմանիայի Դաշնային Հանրապետություն | ամենամյա | գլխավոր մրցանակ | 250.0 |
| | | | | անվանակարգային մրցանակ | 200.0 |

| 2. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՉԱՓԵՐԸ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| NN ը/կ | Փառատոնի կամ մրցանակաբաշխության անվանումը | Կառույցը | Հաճախականությունը | Մրցանակը | Դրամական խրախուսման ամսավճարի չափը (հազ. դրամ) |
| 1 | Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) Կրթության և մշակութային գործունեության միջազգային կոմիտեի մրցանակ | ԻԿՕՄ | ամենամյա | «Լավագույն փորձ» մրցանակ | 460.0 |
| 2 | Եվրոպայի խորհրդի թանգարանների ոլորտի մրցանակաբաշխություն | Եվրոպայի խորհուրդ | ամենամյա | «Տարվա եվրոպական թանգարան» մրցանակ | 310.0 |
| 3 | «Եվրոպա Նոստրա» համաեվրոպական կազմակերպության մրցանակաբաշխություն | «Եվրոպա Նոստրա» համաեվրոպական կազմակերպություն | ամենամյա | «Եվրոպա Նոստրա» անվանակարգային մրցանակներ | 200.0 |
| 3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՉԱՓԵՐԸ | | | | | |
| 1 | Նոբելյան մրցանակ | Շվեդիայի Թագավորություն Նորվեգիայի Թագավորություն | ամենամյա | անվանակարգային մրցանակ | 800.0 |
| | | | | մասնակցություն | 660.0 |
| 2 | Բուկերյան մրցանակ | Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային | ամենամյա | անվանակարգային մրցանակ | 660.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Իռլանդիայի Միացյալ թագավորություն | | մասնակցություն | 550.0 |
| 3 | Դուբլինի Միջազգային գրական մրցանակ | Իռլանդիա | ամենամյա | անվանակարգային մրցանակ | 660.0 |
| | | | | մասնակցություն | 550.0 |
| 4 | Նոյշտադտի գրական մրցանակ | Ամերիկայի Միացյալ Նահանգներ | երկամյա | անվանակարգային մրցանակ | 660.0 |
| | | | | մասնակցություն | 550.0 |
| 5 | Հանս Քրիստիան Անդերսենի անվան մրցանակ | Դանիայի Թագավորություն Երիտասարդների համար գրքերի միջազգային խորհուրդ (IBBY) | երկամյա | անվանակարգային մրցանակ | 550.0 |
| | | | | մասնակցություն | 460.0 |
| 6 | Հյուգոյի մրցանակ | Ամերիկայի միացյալ Նահանգներ | ամենամյա | անվանակարգային մրցանակ | 550.0 |
| | | | | մասնակցություն | 460.0 |
| 7 | Եվրոպական միության գրական մրցանակ | Եվրոպական միություն | ամենամյա | անվանակարգային մրցանակ | 460.0 |
| | | | | մասնակցություն | 380.0 |
| 8 | Ֆրանց Կաֆկայի մրցանակ | Չեխիայի Հանրապետություն | ամենամյա | անվանակարգային մրցանակ | 460.0 |
| | | | | մասնակցություն | 380.0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ